ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 մայիսի 2023 թվականի N 188 -Ա

«ԳՈՐԻՍԻ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ՇԱՀԳԵԼԴՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՕԼՅԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Գորիսի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Շահգելդյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ՝

«Գորիսի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Շահգելդյանի առողջական խնդիրների պատճառով՝ 2023 թվականի մայիսի 22-ից՝ նրա անաշխատունակության մեջ գտնվելու ընթացքում, տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Օլյա Ալեքսանյանին:

22.05.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. մայիսի 22
ք. Կապան